Հավելված N 3
ՀՀ կառավարության 2006 թվականի
նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման

Ձև

# Հ Ա Յ Տ

## Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

<table>
<tr><td>Ծրագրի անվանումը</td><td>Ջերմուկի քաղաքային ճոպանուղու ավտոկայանատեղիի ասֆալտապատում, Ջերմուկ քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքների ասֆալտապատում, «Ջերմուկ համայնքի «Զատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի Կեչուտ գյուղի մասնաշենքի բակային տարածքի ասֆալտապատում</td></tr>
<tr><td>Մարզ</td><td>Վայոց ձոր</td></tr>
<tr><td>Համայնքը /համայնքները</td><td>Ջերմուկ համայնք /ք. Ջերմուկ, գ. Կեչուտ և գ. Գնդեվազ/</td></tr>
<tr><td>Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից</td><td>Մայրաքաղաք Երևանից՝ 175 կմ, մարզկենտրոն Եղեգնաձորից՝ 50 կմ:</td></tr>
<tr><td>Համայնքի /բնակավայրի բնակչությունը</td><td>Ջերմուկ համայնք 8108 մարդ,<br>Ծրագիրն իրականացնող բնակավայրի /բնակավայրերի բնակչությունը՝ Ջերմուկ քաղաք՝ 6159, գյուղ Կեչուտ՝ 1088 և գյուղ Գնդեվազ 861,</td></tr>
<tr><td>Սահմանամերձ համայնք/բնակավայր</td><td>Ջերմուկ համայնքը և դրանում ընդգրկված բնակավայրերը սահմանամերձ չեն:</td></tr>
<tr><td>Բարձր լեռնային համայնք /բնակավայրի</td><td>Ջերմուկ քաղաքը և Կեչուտ գյուղն ընդգրկված է ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 756 որոշմամբ հաստատված ՀՀ բարձր լեռնային բնակավայրերի ցանկում</td></tr>
<tr><td>Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն</td><td>Այո,<br>19.01.2006</td></tr>
<tr><td>Համայնքի և ծրագիր իրականացվող բնակավայրի/բնակավայրերի ենթակառուցվածքներ ի վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝<br><br>- ջրամատակարարման</td><td>Ներկայացնել համայնքի և ծրագիր իրականացվող բնակավայրի/բնակավայրերի ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրագազամատակարարման, ոռոգման, փողոցային լուսավորության վիճակի վերաբերյալ տեղեկատվություն:
<table>
<tr><td>Հ/Հ</td><td>Բնակավայրը</td><td>Ջրամատակարարման տևողությունը</td><td>Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը</td><td>Էլեկտրամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը</td><td>գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,</td><td>ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների</td><td>լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել</td></tr>
</table>
</td></tr>
</table>

**և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը,**

**- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,**

**- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը,**

**- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ**

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | տոկոսը | էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ |
| 1 | ք. Ջերմուկ | շուրջօրյա | 100/100 | 98 | 95 | 5 | 90%, ԼԵԴ լուսավորություն՝ 30% |
| 2 | գ. Կեչուտ | շուրջօրյա | 100/100 | 95 | 95 | 20/5,7 | 90, ԼԵԴ լուսավորություն չկա |
| 3 | գ. Գնդեվազ | շուրջօրյա | Ջրամատակարարում 100, ջրահեռացում 90 | 95 | 90 | 95/40 | 65, ԼԵԴ լուսավորություն 30% |

**Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը**

*Ջերմուկ համայնքը ունենալով զբոսաշրջային մեծ ներուժ, զարկ է տալիս ենթակառուցվածքների զարգացմանը՝ կատարելով ինչպես գործող ենթակառուցվածքների վերանորոգում և արդիականացում, այնպես էլ նորի հիմնում և կառուցում: Նախատեսվում է*
*1. Ասֆալտապատել Ջերմուկ քաղաքի Աջափնյա թաղամասի Մյասնիկյան 10 շենքի բակը՝ 235քմ մակերեսով, Ձախափնյա թաղամասի թիվ 2, 3 և 4 բազմաբնակարան բնակելի շենքերի հետնամասերը՝ ընդհանուր 4400քմ մակերեսով, 23Ա և 23Բ շենքերի հետնամասերը՝*1500քմ մակերեսով՝ տեղադրելով 100գծ/մ եզրաքար, *26Ա և 26Բ շենքերի մայթերը՝ 100քմ մակերեսով, վերակառուցել «Ձափիկ» մանկապարտեզի շինության առջևի հենապատը՝ 290 գծ/մ՝ 330քմ, ասֆալտապատել 120քմ մայթը, տեղադրել 100մ եզրաքար, ասֆալտապատել Ձախափնյակ 1-ին շենքի բակը՝ 2500քմ մակերեսով, տեղադրել 950գծ/մ եզրաքար, կատարել դիտահորերի և ջրորսիչների ծածկի սալերի ապամոնտաժում և մոնտաժում: Հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժի համար նախատեսել համապատասխան հարմարություններ: Կառուցվող օբյեկտի ռիսկայնության աստիճանը՝ III կատեգորիա:*

| | |
|---|---|
| | *2. Ասֆալտապատել Ջերմուկի քաղաքային ճոպանուղու ավտոկայանատեղին՝ 2500 քմ մակերեսով, ենթակայանից իջնող աստիճանավանդակի եզրով տեղադրել բազրիք՝ 70մ:*<br>*Հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժի համար նախատեսել համապատասխան հարմարություններ: Կառուցվող օբյեկտի ռիսկայնության աստիճանը՝ III կատեգորիա:*<br>3. *ասֆալտապատել «Ջերմուկ համայնքի «Զատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի Կեչուտ գյուղի մասնաշենքի 740քմ մակերեսով բակը՝ կատարելով հին ասֆալտի վնասված և ճաքած հատվածների քանդում, եզրաքարերի հեռացում, նոր եզրաքարերի տեղադրում և մանր ասֆալտի 5-6 սմ շերտի իրականացում: Հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժի համար նախատեսել համապատասխան հարմարություններ: Կառուցվող օբյեկտի ռիսկայնության աստիճանը՝ III կատեգորիա:*<br>Բակային տարածքների բարեկարգման ընթացքում նախատեսել մայթերի, հարթակների անցուղիների սալապատում, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման աշխատանքներ, նախատեսել տեղանքին բնորոշ ծառերի տնկարկ, հաշվի առնելով կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների կատարման անհրաժեշտությունը:<br>Մանկապարտեզի բակի սալապատման մեծ գնի պատճառով՝ նախատեսել ասֆալտապատում, ուղեկցել կանաչապատման միջոցառումներով՝ ծառերի տնկարկով, խաղային հրապարակների կառուցմամբ և կահավորմամբ՝ հիմք ընդունելով արդի նորմերի պահանջները: Նշված միջոցառումները ներառել նախագծում և նախահաշվում: |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին** | Նշված աշխատանքների կատարումը համայնքի կարևոր խնդիրներից են, որոնք, որպես ոլորտային առանձին ծրագեր, ընդգրված է Ջերմուկ համայնքի զարգացման հնգամյա ծրագրում և 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանում:<br>Ծրագրի իրագործման արդյունքում կունենանք՝<br>Ծրագրի իրագործման արդյունքում կունենանք նորակառույց ավտոկայանատեղի ասֆալտապատ բակային տարածքներ և մայթեր, ապահովելով<br>-համայնքի բնակիչների և բազմահազար զբոսաշրջիկների անվտանգ տեղաշարժի, զբոսանքի և հանգստի բարեկեցիկ պայմաններ,<br>-քաղաքի զբոսաշրջային գրավչությունը բարձրացնող խթան,<br>-բնակիչների և հյուրերի հանգստի համար հաճելի և գեղեցիկ միջավայր,<br>-մանկապարտեզի աշխատակիցների աշխատանքի, մանկապարտեզ հաճախող երեխաների կրթության համար բարեկեցիկ և անվտանգ պայմաններ: |
| **Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները** | Նախատեսվում է .<br>-գնումներ գործընթացի կազմակերպում /շինության տեխնիկական վիճակի ուսումնասիրության, նախագծանախահաշվային փաստաթղթերի, շինարարական աշխատանքների, տեխնիկական, հեղինակային հսկողության ծառայությունների ձեռք բերում/<br>-արդյունքների ամփոփում, պայմանագրի կնքում,<br>-աշխատանքների իրականացում, հանձնաժողովի կողմից արդյունքների ընդունում և վերահսկողություն:<br>Ծրագրով նախատեսվում է<br>1.Ասֆալտապատել Ջերմուկ քաղաքի Ձախափնյա թաղամասի մի շարք բազմաբնակարան բնակելի շենքերի հետնամասերը, մայթերը՝ տեղադրելով եզրաքարեր, վերակառուցել «Զատիկ» մանկապարտեզի շինության առջևի |

| | |
|---|---|
| | հենապատը, ասֆալտապատել մայթը, տեղադրել եզրաքարեր, կատարել դիտահորերի և ջրորսիչների ծածկի սալերի ապամոնտաժում և մոնտաժում:<br>2. Ասֆալտապատել Ջերմուկի քաղաքային ճոպանուղու ավտոկայանատեղին՝ աստիճանավանդակի եզրով տեղադրել բազրիք:<br>3. ասֆալտապատել «Ջերմուկ համայնքի «Զատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի Կեչուտ գյուղի մասնաշենքի 740քմ մակերեսով բակը, տեղադրել նոր եզրաքարեր: |
| **Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի** | *Ծրագրով կառուցվող օբյեկտների հողամասերը հանդիսանում են համայնքային սեփականություն:*<br><br>*Նախատեսված աշխատանքների արդյունքում օբյեկտների հաշվեկշռային արժեքները կավելանան, քանի որ ծրագրով նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են:* |
| **Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա** | Ծրագրի ուղղակի շահառուները համայնքի 8108 բնակիչներն են ու յուրաքանչյուր տարի համայնք այցելող 60 հազար զբոսաշրջիկները: Բակերի ասֆալտապատումը կկանխի մեքենաների պահեստամասերի՝ ժամկետից շուտ խափանումը, արդյունքում կնպաստի դրանց վերանորոգման ծախսերի կրճատմանը, բնակչի համար կապահովի ֆինանսական միջոցների խնայողություն: Այն կապահովի համայնքի բնակիչների և զբոսաշրջիկների անվտանգ տեղաշարժն ու երթևեկությունը, զբոսանքի և հանգստի համար կստեղծի ավելի բարենպաստ պայմաններ:<br>Մանկապարտեզի բակի ասֆալտապատումը անվտանգ և բարեկեցիկ աշխատանքային պայմաններ կապահովի 15 աշխատակիցների համար, իսկ 35 երեխաների համար ժամանցային և սպորտային խաղերով զբաղվելու հնարավորություն կստեղծի: Մասնաշենքը գտնվում է Կեչուտի միջնակարգ դպրոցից 100մ հեռավորության վրա:<br>Քաղաքի ասֆալտապատվելիք փողոցները երկրորդային են, փողոցի նպատակային կիրառությունը՝ ներբնակավայրային, բնակելի շենքերի ասֆալտապատվող բակերը և մայթերը հարակից են «Ջերմուկի կրթահամալիր» ՊՈԱԿ-ի մասնաշենքին:<br>Ջերմուկի քաղաքային ճոպանուղու կայանատեղին գտնվում է դրան կից և սպասարկում է դրան, և քաղաք այցելող յուրաքանչյուր զբոսաշրջիկ օգտվում է ճոպանուղու ծառայություններից:<br>Ասֆալտապատվող տարածքների տակով անցնում են ջրամատակարարման և ջրահեռացման խողովակներ, որոնք սպասարկում է «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերությունը: Ջրահեռացման խողովակները փոխարինվել են, նոր են նաև դիտահորերը: |
| **Նշել ծրագրի իրականացման** | Ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվի մինչև 35 ժամանակավոր |

| | |
|---|---|
| **ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը** | աշխատատեղ՝ աշղեկ, ճարտարագետներ, քարտաշներ, վարորդներ և բանվորներ: Ծրագրի իրականացման արդյունքում համայնքապետարանից և մասնավոր հատվածից հիմնական աշխատատեղ չի նախատեսվում: |

**Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը**

Նախորդ տարվա բյուջեն՝ 975,162,215 դրամ.

*Ներկայացնել նախորդ տարվա բյուջեն, ծախսերը և կատարողականը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:*

| | ***Պլանը*** | ***Փաստացին*** | ***Տոկոսը*** |
|---|---|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները*** *այդ թվում՝* | 774,182,134 | 603,014,707 | 77.89 |
| *-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | 642,402,712 | 586,164,350 | 91.25 |
| *- Սեփական եկամուտներ* | 441,057,292 | 384,572,820 | 87.19 |
| *-Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | 131,779,422 | 16,850,357 | 12.79 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | 975,162,215 | 641,034,043 | 65.76 |
| *- Վարչական բյուջեի ծախսեր* | 666,262,715 | 577,738,285 | 86.75 |
| *-Ֆոնդային բյուջեի ծախսեր* | 308,899,500 | 63,295,758 | 20.49 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը,*** *որից՝* | 308,899,500 | 63,295,758 | 20.49 |
| *- ճանապարհաշինություն* | 1,845,000 | 1,845,000 | 100 |
| *- ջրամատակարարում* | 1,244,000 | 1,045,440 | 84.04 |
| *- փողոցային լուսավորություն* | 2,000,000 | 782,250 | 39.11 |
| *- գյուղատնտեսություն* | | | |
| *-այգիների/պուրակների բարեկարգում* | 68,744,000 | 6,824,300 | 9.93 |
| *-ճոպանուղու շինությունների կառուցում, նորոգում կառուցում* | 15,095,800 | 14,789,452 | 97.97 |

**Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն**

798,799,266 դրամ.

*Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:*

| | ***Պլանը*** |
|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում*** *այդ թվում՝* | 798,799,266 |
| *- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | 606,783,843 |
| *- սեփական եկամուտներ* | 449,456,643 |
| *- Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | 192,015,423 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | 961,501,310 |
| *- Վարչական բյուջեի ծախսեր* | 638,752,910 |
| *-Ֆոնդային բյուջեի ծախսեր* | 322,748,400 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը,*** *որից՝* | |

| | |
|---|---|
| -քաղաքապետարանի հիմնարկի պահպանման ծախսեր | |
| -գյուղական բնակավայրերի խմելու ջրի ջրագծերի և կապտաժների վերանորոգում | 63,691,000 |
| գերեզմանատների բարեկարգում | 70,204,000 |
| *-արտաքին լուսավորության իրականացում* | 40,953,000 |
| *-ասփիճանների հիմնանորոգում և աղբամանների տեղակայման տարածքների բարեկարգում* | 21,738,000 |
| *-այգիների հիմնանորոգում* | 57,086,350 |

**Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը**

Հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրով սուբվենցիոն ծրագրի իրականացման տարվա բյուջեն՝ 785,649.800 դրամ.

Հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրով սուբվենցիոն ծրագրի իրականացման տարվան հաջորդող տարվա բյուջեն՝ 808,192.900 դրամ.

Ներկայացնել ծրագրի իրականացման և իրականացման տարվան հաջորդող տարվա միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված եկամուտները և ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից նախատեսված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով

| | Ծրագրի իրականացման տարի | Ծրագրի իրականացման տարվան հաջորդող տարի |
|---|---|---|
| **Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտներ՝ ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի,** այդ թվում՝ | 785,649.800 | 808,192.900 |
| - Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝ | 638,899.800 | 677,817.900 |
| - Սեփական եկամուտներ | 459,682.900 | 497,341.300 |
| - Ֆոնդային բյուջեի եկամուտներ | 146,750.000 | 130,375.00 |
| **Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի,** որից՝ | 698252100 | 733164710 |
| - Վարչական բյուջեի ծախսեր | 638,899.500 | 677,817.700 |
| - Ֆոնդային բյուջեի ծախսեր | 146,750.000 | 130,375.000 |
| **Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը՝ ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, որից՝** | 146,750.000 | 130,375.000 |
| - ճանապարհաշինություն | 0 | 0 |
| - ջրամատակարարում | 0 | 0 |
| - փողոցային լուսավորություն | 0 | 0 |
| - գյուղատնտեսություն | 0 | 0 |
| -- Այլ մեքենաներ և սարքավորումներ | 13,475,000 | 0 |
| - Շենքերի և շինությունների կառուցում | 62,475.000 | 0 |
| - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 66.150.000 | 130,375.000 |
| **Ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի համար նախատեսված ծախսերը, ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, այդ թվում՝** */ներկայացնել սուբվենցիոն ծրագրերի համար* | 146,750.000 | 130,375.000 |

| | | |
|---|---|---|
| *համայնքի ֆոնդային բյուջեից նախատեսված գումարները՝ ըստ ոլորտների/* | | |
| - ճանապարհաշինություն | 0 | 0 |
| - ջրամատակարարում/ջրահեռացում | 0 | 0 |
| - փողոցային լուսավորություն | 0 | 0 |
| - գազամատակարարում | 0 | 0 |
| - նախադպրոցական հաստատություններ | 0 | 0 |
| - հասարակական շենքեր | 128,625.000 | 130,375.000 |
| - գույքի, տեխնիկայի ձեռքբերում | 13,475,000 | 0 |
| - | | |

**Համայնքի ծրագրի իրականացման տարվա միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված բյուջետային մուտքերի (ներառյալ՝ ֆինանսական համա-հարթեցման դոտացիայի գծով նախատեսված մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկ- ներով**

Համայնքի բյուջեով նշված ծրագրի ամբողջական իրագործումն անհնար է, այս ոլորտին ուղղված համապատասխան ֆինանսական միջոցների սղության պատճառով:
Համայնքի բյուջեի ֆոնդային մասում առկա և պլանավորված եկամուտների գումարը (146.7 մլն դրամ) չի բավարարում 2024 թվականին պլանավորված ծրագրերի լիարժեք իրագործմանը:
2024 թվականին նախատեսված կապիտալ ծախսերն են՝
-Ջերմուկ համայնքում հասարակական շենքերի կառուցում, վերանորոգում՝ 81,968,620 դրամ,
- Ջերմուկ քաղաքի փողոցների, մայթերի ասֆալտապատում՝ 184,025,170 դրամ:

**Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝**
**- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը 3,060,000 դրամ,**
**- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ 399,000 դրամ,**
**- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 2,825,300**

*188,534,170 դրամ (100%), ըստ բնակավայրերի՝*

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | **ք. Ջերմուկ,** աշխատանքի ընդհանուր գինը, հազ. դրամ | **գ. Կեչուտ,** աշխատանքի ընդհանուր գինը, հազ. դրամ | **գ. Գնդեվազ,** աշխատանքի ընդհանուր գինը, հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| 1 | բակային տարածքների ասֆալտապատում | 134500.92 | 0 | 0 |
| 2 | ճոպանուղու կայանատեղիի ասֆալտապատում | 41183.25 | 0 | 0 |
| 3 | մանկապարտեզի բակի ասֆալտապատում | 0 | 12850 | 0 |
| | Ընդամենը | 175684.17 | 12850 | 0 |

| | |
|---|---|
| **դրամ,<br>- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 1,042,620 դրամ,<br>- գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ 0 դրամ, ինժեներաերկրաբանական հետազոտության ծառայության արժեքը՝ 1,050,000 դրամ<br>ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը 0 դրամ** | *Մինչև ընթացիկ տարվա վերջ չավարտվող ծրագրերի դեպքում՝ հստակ առանձնացնել ընթացիկ տարվա ընթացքում նախատեսվող աշխատանքներն ու ծախսերը և հաջորդ տարվա աշխատանքներն ու ծախսերը*<br>Նախատեսում ենք ծրագիրն ավարտել 2024 թվականի ընթացքում: |
| ***Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը*** | **94,267,085 դրամ (50%)** |
| ***Այլ ներդրողներ*** | **Այլ ներդրողներ չկան:** |
| ***Ծրագրի իրականացման փուլողությունը*** | **Սկիզբը՝ 01.05.2024թ.**<br><br>**Տևողությունը 5 ամիս** |
| ***Ծրագրի ծախսերը*** | *Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումից հետո կիսպակեցվի ծրագրի արժեքը:* |
| ***Ամսաթիվ*** | *20 հունիսի 2023 թ.* |

**Այլ տեղեկություններ ծրագրի մասին** (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):

**Համայնքի տնտեսական պատասխանատու՝ Ստեփանոս Վարդանյան**
**Հեռ.՝ 077.57.75.60, էլ.փոստ՝ Vardanyan.Stepan@mail.ru**

---

**Համայնքի ղեկավար** ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ
(անունը, ազգանունը)

Կ. Տ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ * RA VAYOTS DZOR REGION JERMUK MUNICIPALITY * 08917563